

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՃԱՌԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 59ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Յարգելի ժողովականներ եւ Բարեկամներ,

Իրեւ հաւատաւոր անդամներ Հ. Բ. Ը. Միութեան ու ներկայացուցիչներ անոր աշխարհացրիւ անդամակցութեան՝ դարձեալ եկած ենք տարեկան այս աւանդական հաւաքին քննարկելու համադրային մեր կազմակերպութեան միամեայ գործունէութիւնը, խորհրդածելու անոր շուրջ, եւ անկէ բնութագրուած իրողութեանց լոյսին տակ հաստատելու կամ վերաքննելու մեր առաջադրութիւնները անմիջական կամ հեռուոր դալիքին համար:

Անդամական մեր այս հիմնական պարտականութեան կատարումին եւ իրաւունքի կիրարկումին առթած հոգեկան գոհունակութենէն անբաժան է տարուէ տարի խմբովին զիրար վերատեսնելու եւ դէթ քանի մը ժամ ազդային յարկի ներքեւ միասին ըլլալու հաճոյքը, Միութեան բարի գործերուն եւ նշանումներուն խոր հասկացողութեամբ յազեցած միջնորդութիւն մէջ: Եւ ուրախ եմ որ դարձեալ միասին ենք այսօր. ուրախ եմ որ դուք բոլորդ հոս էք: Բարեկեցած էք Հ. Բ. Ը. Միութեան 56րդ Ընդհանուր ժողովին:

Ամէն անգամ որ այս պատկանելի բեմէն բարձրաձայն վերլուծումի ենթարկել եմ Միութեան կեանքն ու գործը, միշտ ալ բախտն ու վայելքը ունեցել եմ վերադրական եղանակով ներկայացնելու տուեալ տարեշրջանը բաղդատմամբ նախորդին կամ նախորդներուն: Այսպէս լուսազեղ է եղել պատկերը դէթ ինչ կը վերաբերի Միութեան գոյութեան, ապագային եւ առաքելութեան առնչուած էստարերուն: Հ. Բ. Ը. Միութեան հաւատաւորներուն, եւ համայն ազգին համար ալ, փոքր նշանակութիւն պէտք չէ ունենայ անկասկած այն իրողութիւնը, որ 66 տարիներու ազդանուէր անկշռելի վաստակով բնուոր մեր կազմակերպութեան կեանքին մէջ 1971 տարին ալ շուրջ մէջ կը ձեռնարկէ նախորդները:

Շնորհիւ տոտաւածեան ու անուահաղի բարերարներու առաւելաբար պայմանաւոր նուիրատուութեանց եւ կտակադրամներու, ինչպէս նաեւ աշակերտ մատակարարումի, մեր հիմնադրամները կրեցին 1,362,000 տոլարի յաւելում մը, հասնելով 19,149,000 տոլարի, ընդհանուր գոյքը բարձրացաւ 20,817,000 տոլարի — տոմարական արժէքով —, իսկ ազգապահպանման նպատակներու համար — կրթական, մշակութային, երիտասարդական, խնամատարական, ազդային եւ կրօնական հաստատութեանց, եւայլն — ծախսեցինք 1,636,000 տոլար, այսինքն 216,000 տոլար աւելի քան 1970ին:

Միութեան 17 սեփական վարժարանները, 221 համալսարանական ստեներն ու կրթական աջակցութիւնը վայելող շուրջ 170 այլ հայ ուսանողներ եւ Միութենէն նպաստ ստացող 68 սփիւռքահայ կրթական օժանդակ ստացան 1,242,000 տոլար, ազգապահպանման յատկացումներուն մեծագոյն քաժինը,

76 առ հարիւր : Մշակութային ձեռնարկներու տրուած է 118,000 տոլար, երկր-տասարդական շարժումներու՝ 77,000 տոլար, խնամատարական կարիքներու՝ 127,000 տոլար, ազգային եւ կրօնական հաստատութեանց եւ անհատներու ըստ կտակային արամազրութեանց՝ 69,000 տոլար :

Բարոյագիտական դասական ըմբռնումով տալը հաճոյք է, ուրիշին երջանկացումը տուողին երջանկութիւնն է : Սակայն, կեանքի կարծր իրականութիւնը թոյլ չի տար ո՛չ ընդհանրացնել այս առաքինութիւնը ե ո՛չ ալ խոր-կանքը սնուցանել զայն զանգուածէն իւրացուած խորհելու : Հասկնալի է որ անհատական շափանիչներով պէտք չէ դատել կազմակերպութիւնները՝ անոնք ըլլան բարեփոխական, քաղաքական, մշակութային կամ առեւտրական : Սակայն չեմ կրնար չյայտարարել եւ չընդգծել այն իրողութիւնը, որ Բարեկոր-ծականը եղակի է իր մեծութիւնը գտած է տալուն մէջ, իսկ երջանկութիւնը՝ տալ կարենալուն մէջ :

Հ. Բ. Ը. Միութեան գոյութիւնը իմաստաւորուած է ազգային պա-հանջներու առաւելագոյն շափով եւ փութկոտութեամբ ընդառաջելով : Ահա թէ ինչո՛ւ երբ անհատներ ու այլ կազմակերպութիւններ կը փորձեն ծածկել ի-րենց մատակարարական բացերը, մենք ճակատաբաց ցոյց կու տանք պիտոճե-ական մեր կազացումները՝ անոնց վրայ հրաւիրելով մեր անդամակցութեան, բարեւէր ազգայիններուն եւ հայ ժողովուրդին ուշադրութիւնը, որպէսզի ա-մէնքը խորաշափեն իրականութեան մէջ կենսունակութեան հետեւանք եղող հանրային աճող կարիքները եւ ըստ այնմ զոհարելեն անոնց բարձումին :

Քանի մը տարիներէ ի վեր ընդհանրական բնոյթ կրող նպատակներու տաճմանուած եկամուտները անբաւարար էին : Ուրիշ խօսքով, ընդհանրական եկամուտ գլուխին բացը կը հաւասարակշռէինք նախորդ չրջաններէ մնացեալ կիրարկելի կշիռներով : 1970ին զանուեցանք նոր, աննախընթաց իրողութեան մը առջև : Մտխած էինք 1,762,000 տոլար, այսինքն 2,000 տոլար աւելի քան մեր համախառն եկամուտները : 1971ին կրկնուած կը տեսնենք այս երե-ւոյթը : 1,950,000 տոլար ընդհանուր մուտքին դիմաց ընդհանուր ելքը եղած է չուրջ երկու միլիոն տոլար : Ուրեմն 1971ին ունինք 48,000 տոլարի բաց մը, որուն հաւասարակշռումը դրեթէ սպասեց նախորդ չրջաններէ մնացեալ կի-րարկելի կշիռը :

Այսուհանդերձ հաշուի առնելով մեր ելմտական ընթացքը նախորդ մի-քանի տարիներուն, որոնք հարկադրած էին խոշոր ծախքեր կրթական, մշա-կութային եւ երկրտասարդական նպատակներու համար, 1971ը կարծէք կը նշէ տնտեսական անկիւնադարձ մը, հակառակ մեր ունեցած բացին :

Բաւական է, որ քանի մը տարի եկամուտները աճին համեմատաբար աւելի քան ծախքերը, եւ անոնք շուտով կ'ըլլան բացարձակ առումով ալ դերա-կշիռ : Այնուհետեւ մեր Միութիւնը կրնայ ամբողջական միջոցներով եւ ար-դիւնաւորապէս դիմադրաւել փաղտան մարտահրաւէրը : Եւ կը սպասեմ եւ կը յուսամ որ բոլորը, լաւ ըմբռնեն այս իրավիճակը եւ ճակատադրական այս հանգրուանին ձեռք տան մէկ հատիկ Բարեկործականին՝ ի սէր մեր բախտա-ղուրկ հայրենակիցներուն, յօգուտ նորափթիթ սերունդներուն եւ յանգործու-թիւն մանաւանդ երէցներուն խղճմտանքին, որ քաժիններու գութին պիտի չը-լքուի Հայ Մշակոյթի եւ Հայ Ոգիի մշտափառ արիւնքի տարածքին :

Բարդ է մերօրեայ կեանքը ամէնուրեք: Վերջին քանի մը տարիներուն չեղաչրջուած արժէքներ, միջոյցայր, կրթական, քաղաքային, բնակարային, ցեղային եւ այլ տաղնապներ հարկադրեցին միջադգային ամենէն խոշոր բարեփոխական կադմակերպութիւններուն «ասպատակել» իրենց հիմնադրամները, կրճատել իրենց դործունէութիւնը եւ կոճկուիլ: Իր շրջապատին ահարկու աղ-ղեցութիւններէն զերծ չէ սփռաքահայը. նոր ժամանակներու պահանջները իրն ալ են: Եւ խեղապէս հրաշալի երեւոյթ է, որ 66 տարիներու աղգանուէր ծառայութեանց փաստակով բեռնաւոր Հ. Բ. Բ. Միութիւնը նոյն այս տարի-ներուն փոխանակ կոճկուելու, առազստ բացաւ դէպի ցարդ անտես առնուած հորիզոնները հայ կեանքին, առաւել եւս ամբապնդեց ինքզինք հոն՝ ուր խա-րսխած էր արդէն, եւ յամի Տեառն 1971 ծախսեց չուրջ երկու միլիոն տոլար, առանց որ դպի իր անձեռնմխելի հիմնադրամներուն:

Բարեբախտաբար յաջողութեան ջերմաչափէն ոմանք տեսանելի են՝ համադրային թէ միութեանկան ճակատներու վրայ: Համալսարանական ուս-մամբ զինուած պատուախնդիր հայ երիտասարդները անկասկած իրենց բնա-նիքին եւ շրջապատին բարօրութեան եւ բարեկեցութեան կոռուան են: Որքա՜ն շատցան անոնք այս վերջերք: Միութեամբութիւն է արեւմտեան ավերու վրայ հասակ նետած մեր գաւակներուն արթնցող հետաքրքրութիւնը՝ դէպի իրենց արմատը, դէթ խլրտումը ի խնդիր համահայկական նպատակներու յաջողու-թեան:

Միութեան Հիւսիսային Ամերիկայի անդրանիկ ամէնօրեայ հայ վար-ժարանը Տիթրոյթի մէջ կոչուած է բլլալու չափանիշ հաստատող տիպար կըր-թական օճախ մը: Մեր երգի—սարի անսամպլները այլեւս նորութիւն չեն նը-կատուիր:

Հարաւային Ամերիկայի մեր չորս մասնաճիւղերը՝ Պուէնոս Այրէս, Գորտոպա, Մոնթելվիտէօ եւ Սան Փաւլօ խանդավառութեամբ, պատասխանա-տուութեան գիտակցութեամբ եւ ծրագրեալ աշխատանքով կը ճշին արդիւնա-ւորել աղգապահպանման գործը Ռիօ Տը Լա Փլաթայի կամ Ռիօ Տը Փանելյո-յի ավերուն վրայ:

Երկար թմրիւրէ ետք արթնութեան նշաններ ցոյց կուտայ Եւրոպայի շրջանակը, ի մասնաւորի Ֆրանսան: Մեզ կը խանդավառէ մեծապէս մեր մար-միններուն, անոնց ղեկավարներուն եւ երիտասարդ ուժերու նախանձախնդրու-թիւնը՝ օգտագործելու ղեկարուեստի աշխարհին մէջ Փարիզի բնծայած կա-րելիութիւնները ի նպաստ Հայ Մշակոյթի եւ Հայ Արուեստի ծանօթացման եւ փառաւորման, եւ անոնց բարձրորակ մատուցումին համեմատական գօտինե-րու մէջ:

Միջին Արեւելքի մեր կրթական հաստատութիւնները, մշակութային, երիտասարդական եւ մարզական յարկերը մեր պարծանքն են: Պիտի չարու-նակենք մեր գուրգուրանքին առարկան ընել զանոնք, ողեւորուիլ իրենցմով:

Սակայն պիտի չմոռնանք եւ միշտ պիտի յիշեցնենք որ հայապահպա-նումի արդաւանդ հողը, որուն վրայ իրենք ծաղկեցան, ղեռ Հայութեան չը-տուաւ նուիրեալ ուժերու, նիւթի եւ ոգիի այն բերքը՝ որ համապատասխան բլլար մշակումի ահապին ճիգին եւ ուղղումին:

Մեծ ճկունութեամբ յատկանշուած Միութեան 66ամեայ կեանքը պիտի շարունակէ ընթանալ նոյն մայրուղիէն: Չենք կարծեր, որ մօտ ապագային հայ կեանքի կարիքները զգալապէս հուն փոխեն, և ոչ մէկ պատճառ կայ խորհելու որ 1980ին կամ 1990ին անոնք պիտի բլրան նուազ քան այսօր եւ մեր ժողովուրդը պէտք պիտի չունենայ Հ. Բ. Ը. Միութեան: Ընդհակառակն: Ընդունինք որ ներկայ հանդրուանին աւելի քան երբեք ուժղին է բախումը այսօրուան կարիքներուն եւ վաղուան պահանջներուն միջեւ: Այլ խօսքով՝ կամ Միութեան հիմնադրամներն ու տարեկան եկամուտը պէտք է աճին համեմատաբար աւելի քան յատկացումները, եւ կամ ծախքերը կրճատուին՝ որպէսզի վաղը ամբողջական չդատաւարաւորուինք:

Բացուած կը հռչակեմ 59րդ Ընդհանուր Ժողովը, ձեռն յատակահարկով որ չենք ուզեր կրճատել մեր յայտապիւրները, չենք փախաբեր կոճկուիլ եւ երբեք չենք ցանկար կձկուիլ: Վստահ եմ որ աշխարհի չորս ծագերուն սփռուած մեր անդամակցութիւնը, մեր վեհանձն բարերարներն ու ժողովուրդը անցեալին նման ամբողջապէս զօրավիշ պիտի կանդնին Հ. Բ. Ը. Միութեան որպէսզի ան, այսօր եւ վաղը, լրիւ չափով արժեցնէ իր նախախնամական դերը հայ կեանքին մէջ՝ հայ ժողովուրդի վերելքին եւ բարօրութեան համար:

Նիւ Եորք

Հոկտեմբեր 28, 1972